

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ,” “HANDES AMSORYA,”

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԽԷ. ՏԱՐԻ — 1933

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

XLVII. JAHRGANG — 1933

Herausgegeben und redigiert von der MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի ՄԻԽԻԹԱՐԻՏԵԱՆ ՄԻՇԵՆՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ Ի ՎԻԵՆԱՆ Է շխատակցութեամբ ազգային եւ օտար Բանասէրներու:

Որպէս զի անկի մատչելի դառնայ Ուսումնասիրութեան օտարալեզու արեւելագէտներուն, Խմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր բանասիրական յօդուածներուն համառօտ մէկ ամփոփումը, մեջազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագրինն է ամէն երկրի համար՝ 5 տոլար, կամ յօիկ:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE “HANDES AMSORYA,” VIENNE (Autriche), VII., Mechitharistengasse 4.

Unsere Adresse:

Preis dieses Jahrganges 5 Dollars.

Հ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կը յայտնենք մեր սրտագին շնորհակալութիւնը Պր. Վահան Տարակեանի և Մարսէլի, որ հաճեցաւ նուիրել Միխիթարեան Թանգարանին նկարի՝ Պր. Պօղոս Դողախեանի մէկ յաջող խորանկարը:

Գ Ի Շ Ե Ր Ը Լ Ո Ւ Մ Ն Ե Ա Կ Ի Ն Տ Ա Կ

Կը յայտնենք նոյնպէս մեր խորին շնորհակալութիւնը Պր. Յովհաննէս Խառնիքեանի, Աղեքսանդրիա, որ հաճեցաւ նուիրել Միխիթարեան Թանգարանին թանկանոցին մը հին ու նոր յարգի դրոշմակներու:

Հ. ՎԱՐՊԱՆ Վ. ՄԵԼԻՍԵՆԻՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱԳՈՏ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 9, 10

ՍԵՊՏԵՄԲԵՐ — ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԽԷ. ՏԱՐԻ 1933

Մ Ո Վ Ս Է Ս Գ. Տ Ը Թ Ե Ի Ը Յ Ի Կ Ը Թ Ո Ղ Ի Ո Ս Կ Ե Ը Ն Բ Ն Ե Ի Գ Ո Ր Ժ Ո Ւ Ն Է Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Մ Ա Հ Ո Ւ Ա Ն 300 Ա Մ Ե Ա Յ Տ Ա Ր Ե Գ Ա Ր Զ Ի Ն Ա Ռ Թ Ի Ի (Շարունակութիւն:)

13. Մ Ե Ծ Ա Ն Ա Պ Ա Տ Ի Հ Ի Մ Ն Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ոչ ժամանակակից կեանքի պատկերն ամբողջութեամբ եւ ոչ Մովսէս կաթողիկոսի վաստակն ըստ արժանւոյն ներկայացուցած պիտի ըլլանք, եթէ վերաբերենք մեր տեսութեանն Մեծ Անապատն, որուն հիմնարկութիւնը դարուս նշանաւորագոյն երեւոյթը պէտք է նկատել: Մեծ Անապատն եղաւ, որ յառաջ բերաւ այն թմբուցութեամբ զգածուած դարուն կեանքի զարթոյնը եւ թարմութիւնը, որուն բարեբար ազդեցութեան մօտաւոր աւորուն կեանքի զարթոյնը եւ թարմութիւնը, որ պազան հանդիսացաւ վկայ: Մովսէս չէր Անապատին հիմնադրը, բայց անկիա եղաւ Անապատին մտաւոր ուղղութեան ղեկավարը: Անոր հեռատեսութեան արդիւնքն եղաւ, որ սկզբան դուր տեսական կեանքի անձնատուր միայնակեանքէն կազմակերպուեցան յառաջ եկան հայ Եկեղեցւոյ համար հատուցուող անձնորդներ եւ հայ մտքի լուսաւորուող անձնորդները: Այն տեղ դրաւ Մովսէս իւր ազգայ մեծութեան հիմքը: Ինչպէս մեծարեւորի մէջ ապահովուած՝ վառեց հոգեւոր եւ իմացական գէնքերով նոր թիւ մը գիտութիւններու եւ յայտնաբերում մարդտակ զէպի մեծ աշխարհ՝ կողոպտելու մարդկան սրտերը, գերելու զանոնք խաչին դրօշին տակ: Թիկունքը տուած Մեծ Անապատին, կուրծքը հակայարձակուեցաւ, պահեց գիրքն անշարժ. Ի վերջոյ թշնամին էր, որ զէնընկէց անձնատուր եղաւ իր առաջ:

Այս կողմին մէջ իրեն պաշտպան դուր Մովսէս յանձին Մելիք Հայկազնի, եւ ռահ-

վիրայ օգնական յանձին Պօղոս վարդապետին: Մովսէս եւ Պօղոս վարդապետներու մէջ կնքուած համերաշխութիւնը արդիւնաւոր բաւ անոնց վաստակը, սիրելի ընծայեց անոնց անունը ժողովրդեան, մասնաւորապէս նոր-Ջուղայեցիներուն, որոնք թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս նպաստատուաց եղան անոնց ազգօգուտ ձեռնարկութիւններուն: Այս պատճառաւ ալ կարեւոր կը համարիմ կից Մեծ Անապատի պատմութեան երեւան բերել նաեւ այս երկու զէմքերը:

Առաքել Դաւրիթեցի խօսելով ժի. դարու առաջին քառորդի հայ մշակոյթի մասին «Ոչ դոյր, կը դրէ, Ի ժամանակին յայնմիկ անապատ եւ կամ գիտող կարգաց կրօնաւորական վարուց, վասն բազում հինից թշնամեաց եկելոց Ի վերայ եւ վրդովմանց եւ աւերակաց աշխարհի Հայոց. ամենեւին բնաջինջ եղեալ խարհիս Հայոց. ամենեւին նշուլ եւ նշմարան առաքինի էր եւ բարձեալ նշուլ եւ նշմարան առաքինի դործոց եւ բարի կարգաց յաշխարհէս Հայոց» (էջ 251): Արդեամբք ալ ժե. դարէն ետքը, երբ վերջալոյսի լուսով լուսաւորուած էին Երեմի, Հերմոնի, Տանձափարախի, Այրի-Տաթեւի, Հերմոնի, Տանձափարախի, Այրի-Վանքի մենաստանները, Լէնկթիմուրի արշաւանքներու եւ յաջորդող պատերազմներու հետեւութեամբ խամրած էին Սիւնեաց, ըստ հետեւութեամբ խամրած էին Սիւնեաց, Աղուանից եւ Արարատեան դաշտի վանքերը եւ անոնց հետ հին դարերու աւանդութիւնները:

Անհատներ միայն, մղուած Ի Հոգւոյն կ'երեւային հեռուոր բարձունքներու վրայ կամ խորածորներու մէջ, որոնք կ'ապրէին մեկանակեաց կեանք մը, անմատոյց վայրերու մէջ: Անոնցմէ մէկն էր Արագածի մենակեացը, որուն անշնչացած կմախքին, կրօնաւորական սքեմի մէջ, որսորդի մը ազգարարութեամբ Ի խնդրի կ'ելլէր Սաղմոսավանքի եպիսկոպոսը Սարգիս, տալու անոր նշխարաց վերջին հանդիսը: Անձանօթ կրօնաւորին հեղափոխեաց պատկերը, փիլոնը անձին եւ կնքուող









